

1965/1191

С. 1930/893

ԲԱՆԿՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ВЫСШИЙ СТУДЕНЧЕСКИЙ
ВОСТОЧНО-ЕВРОПЕЙСКИЙ
Академии Наук
С С Р

Գ. ՊՈԴԼՍՅԱՆ

ԻՐԱՆԻ ՅԵՎ ԻՐԱՆԻԱՆ ԵՆՔ
ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏԻ
ԶՏՈՒՄԸ

ՀԱՅԳԵՑՀՐԱՑ — 1929 — ՅԵՐԵՎԱՆ

350.7

7-79

Ua1409

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

350.7

Պ-79

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР


ԻՆՉՈՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ
ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏԻ ԶՏՈՒՄԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1929

22 JUL 2013

39.222



59241-66.

ԻՆՉՈՒՆ 3ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆԲ ԿԱՏԱՐՈՒՄ ԽՈՐ- ՀԸՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏԻ ԶՏՈՒՄԸ—

16-րդ կուսկոնֆերանսը կուսակցության և բան-
վոր դասակարգի ուղղորդությունը սրեց դեպի խոր-
հըրդային ապարատի զտումն ու ստուգումը և պա-
հանջ դրեց պետապարատի առջև՝ հարմարվել սոցիա-
լիստական վերակառուցման շրջանի տեմպին և իր ամե-
նորյա ընթացիկ խնդիրներում անցկացնել ճիշտ դա-
սակարգային քաղաքականություն: Դեռ ընկ. Լենինն
իր մի շարք նամակներում ու յերույթներում հիշեց-
նում եր, վոր ապարատի սշխատողների կազմեր ու-
նենալն ու կատարած աշխատանքների ստուգումը
հսկայական նշանակություն ունի:

16-րդ կուսկոնֆերանսն արձանագրեց, վոր կու-
սակցության և բանվոր դասակարգի պայքարը խոր-
հըրդային ապարատի խեղաթյուրումների դեմ «դառ-
նում է մեր յերկրում դասակարգային պայքարի ձևե-
րից մեկը»:

Բացի վերոհիշյալ հանգամանքից, մեր ապա-
րատն իր ախորժա աշխատանքներում յետ ե մնում
ու չի հասնում այն տեմպին ու առաջխաղացմանը,
վոր ունի մեր ինդուստրիան, գյուղատնտեսություն
ու կուլտուրական հեղափոխությունը:

Մենք յերկրի կապիտալիստական տարրերի դեմ
հարձակման ենք անցել, բանվոր դասակարգը լարված
տեմպով կուսակցությանը թե ու թիկունք հանդիսա-

նալով՝ նորանոր նվաճումներ ու հաղթանակներ ետանում, իսկ դրա կողքին խորհրդային ապարատը հաճախ դանդաղ եղարժվում—սալթաքում է, տեղ-տեղ կասեցնում է աշխատանքը այս կամ այն բնագավառում, իսկ ապարատում բուն դրած մեր դասակարգային հակառակորդները քայքայիչ աշխատանք են կատարում: Շախտինսկու, Սմոլինսկի, Աստրախանի և այլ գեպքերը հաստատում են մեր հակառակորդների հակահեղափոխական աշխատանքը: Ահա այս բոլոր պայմանները մեզ ստիպում են հարցը դնել պարզ ու վորոշակի: Մեր ապարատում դեռ նստած ունենք մարդիկ, վորոնք դասակարգայնորեն խորթ ելեմենտներ են և չեն ցանկանում կուսակցության ու խորհրդ-իշխանությունները, դեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները կատարել այնպես, ինչպես թելադրում է բանվոր դասակարգը և նրա կուսակցու-թյունը, այլ ծոռում են, աղավաղում ու խեղաթյուրում: Հենց դրա պատճառով ել անցնում ենք խորհրդային ապարատի զտման. սարտաժնիկներին, փչացնող-ներին, վատնողներին, կաշառակերներին, բյուրոկրատ-ներին, կուլակներին ու նեպմաններին պաշտպանող-ներին, նրանց հետ զրկախառնվողներին ու կազմա-լուծվածներին պետք է դնենք:

Մենք պահանջում ենք, վոր ամեն մեկ ծառայող ու աշխատող անշեղորեն ու ժողովրդային կատարի բանվոր դասակարգի կամքը և պրոլետարական իշխա-նության որենքները, առանց այն աղավաղելու:

Զտման աշխատանքի հետ զուգընթաց պետք է անցկացվի ապարատի գործունեության սեռագում, վորը մեզ համար ունի առանձնահատուկ նշանակու-

թյուն, թե ինչպես են կատարվում խորհրդային որենք-ներն ու կուսակցության դիրեկտիվները: Անպայման այս ստուգման ժամանակ հնարավորություն կլինի մանրամասնորեն պարզել, թե վոր որենքն է համա-պատասխանում տեղական պայմաններին, պրակտիկ ինչ դժվարությունների չե հանդիպում և ինչու: Ե կայանում այդ որենքի սխալը, կամ ճշտությունը, բա-ցի այդ՝ ստուգումը մեզ կտա հարուստ նյութ ու հնա-րավորություն, ամբողջ փորձն օգտագործելու մեր ապարատի հետագա օացիոնալ կազմակերպման, վե-րակառուցման ու նրան ձկուն դարձնելու համար:

Ի՞նչ ՄԵՄՆԵՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԶԵ ՈՐԵՆԵՆ ԲՆԵՎՈՐԵ-ԿԱՆ ՈՒ ՊՐՈԹԿԱՇՄԵՆԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոֆմիտությունները պետք է սկսեն լայն ագի-տացիոն-պրոպագանդիստական աշխատանք, մորիլիզա-ցիայի յենթարկեն ամբողջ մասսան, նրա ուղղորու-թյունը կենտրոնացնեն այս հարցի շուրջը և այնու-հետև ստեղծեն լայն հասարակական կարծիք: Արտա-դրական-տնտեսական հանձնաժողովներն ավելի քան խորացրած նախապատրաստական աշխատանք են տա-նելու կադրեր ու պահեստ պատրաստելու խնդրում: Վոչ մի կոլլեկտիվ, լինի նա բանվորական կամ ծա-ռայողական, չպետք է անտեղյակ մնա զտման նշանա-կությունից, և դեռ ավելի. վոչ թե ամեն մի կոլլեկտիվ պիտի իմանա ապարատի զտման անհրաժեշտություն մասին, այլ նաև ամեն մի կոլլեկտիվ, անկախ նրանից, թե պետք է լինելու այնտեղ թե վոչ, գործոն մասնա-կցություն պիտի ցույց տա զտման աշխատանքներին, իր խոսքն ասի բյուրոկրատի և մեր ապարատի սխալ-

ների մասին: Իսկ այս բոլորը հաջող տանելու համար պրոֆմիտեթենական որպաններն, սկսած գործարտեղկումից մինչև միությունների գալառային ու կենտվարչությունները, պետք է կատարեն ծրագրված հետևողական աշխատանք: Միջմիութենական որպաններն ամենաուժեղ հսկողությունը պետք է ունենան ու առանձին միությունների գործունեությունն ասպարիզում ոգնեն նրանց այդ աշխատանքները կազմակերպել ավելի քիչ սխալներով:

Միությունների վարչությունները պարտավոր են մանրամասնորեն հրահանգ ու ցուցմունքներ տալ առաջին հերթին այն տեղկոմներին, վորտեղ գտնվում գնալու չե 1929 թվի ընթացքում: Պետք է լայնորեն կազմակերպել պատի թերթերի աշխատանքները: Բացի սովորական խմբագրականից, մեծ տեղ պիտի տա առանձին հոդվածներին, կարծիքներին ու զիտողություններին, վորոնք վերաբերում են առանձին աշխատողներին և տպարատի թերթյուններին: Պատի թերթերը պիտի կազմակերպեն նաև հիմնարկի ներսում ստուգումներ—բաժինների ու աշխատակիցների միջև, հաշտարարեն մրցում ու զետեղեն այն անձնավորությունների անվանացուցակը, վորոնք մեղադրվում են ապարատը խեղաթյուրելու ու բյուրոկրատիզմի մեջ:

Անհրաժեշտ է, վոր առաջին հերթին բանվորական միություններն իրենց խոշոր գործարաններում ու արհեստանոցներում կազմակերպեն լայն բանվորական ժողովներ և լսեն այն հիմնարկի ղեկավարները, վորը կապված է այդ գործարանի բանվորներին հետ և յենթակա յե գտման: Նման ժողովները պետք է կազ-

մակերպվեն խնամքով և ապահովեն լայն ինքնաքննադատություն: Բանվորական այդ ժողովներում մասնակիցը պետք է ասեն, թե ինչպիսի դասակարգային գիծ է տարել այդ հիմնարկությունը, ինչպես է սպասարկել բան-գյուղ, լայն մասսաներին ու ինչպես է կերպավորում պրոլետարական պետության ղեկըները, վորոնք են նրա սխալներն ու թերությունները:

Ծառայողական միություններն ու հիմնարկների կոլեկտիվները քիչ անելիք չունեն. նրանք նույնպես ամենաակտիվ ինքնաքննադատություն կրակի տակ են առնելու իրենց հիմնարկի գործունեությունը գտման ժողովների ժամանակ և առաջարկություններ են անելու նրա առանձին սխալներն ու մեծ և փոքր սայթաքումները վերացնելու: Դեռ ավելին ենք պահանջելու այս կոլեկտիվներից, վորովհետև գտնվում մենք համարում ենք քաղաքական խոշոր խնդիր: Ծառայողների կոլեկտիվի ամեն մի անդամից շատ ենք պահանջելու, վորովհետև նա ավելի քան մոտիկ է կապնաժմեր հիմնարկին, ավելի շատ է տեսնում այն ղեկավարներ և դասակարգային աղավաղումները, վոր տեղի չեն ունենում իր աչքի առաջ, իր կողքին աշխատող ընկերոջ յենթաբաժնում:

Խորհրդային ծառայողն ավելի շատ բան պիտի ասի մեր ապարատի աղճատումների մասին, մեր դատարանի, միլիցիայի, ֆինանսակցիայի կամ հողբաժնի գործունեության թերություններին, նրա սխալների, այդ որպաններում աշխատող կոնկրետ ֆաստարար ու վտանգավոր անձնավորություն մասին և նախազգուշացնի այն սխալներից, վոր իր կողքի աշխատող ընկերը կատարում է:

Զտման աշխատանքները հաջողություն չեն ունենա, յեթե մեր պրոֆմիություններն ու նրանց տեղական որդանները չզբաղվեն առաջընթաց խնդիրներով և կադրեր պատրաստելու գործով:

Այդ տեսակետից չեղնելով՝ պետք է ամենավճռական բեկում առաջ բերել այն դանդաղ կոտորեցան մեջ, վոր մենք նկատում ենք այս խնդրում: Այն զտումը, վոր անց է կացված Միության միջանի կենտրոնական վայրերում, գալիս է մեզ շատ և շատ բան սովորեցնելու: Տարվա սկզբին զտված 20.000 մարդուց նորից ուղիղ 50%-ը—10.000 մարդ աշխատանքի չեն անցել. նման ալանդակություն չի կարող տեղի ունենալ, յեթե մեր պրոֆմիությունները և ազմինիստրացիան լուրջ վերաբերմունք ցույց տալին աշխատակիցներին հեռացնելու և նոր աշխատակիցներ հրավիրելու խնդրին: Բանվորական միությունները պարտավոր են ամենահրամայողական կերպով անցնել առաջընթաց խնդիրներին, քննության նյութ դարձրնել այն ակտիվին, վորին մտադիր են առաջ քաշել մեր ապարարտում, պետք է նրանց համար կարճատև դասընթացների բացման գործը ապահովել, խմբակներ կազմակերպել ու ամրացնել այն հիմնարկներին (իբրև պրակտիկանտներ), վորտեղ չենթադրվում է դրանց առաջ քաշել: Հիշենք նորից, վոր յեթե իր ժամանակին ու պատրաստված կերպով մենք կադրեր չպատրաստենք, զտվողների փոխարեն առաջ քաշելու համար, յեթե մենք բանվորական ակտիվը իր ժամանակին չհասցնենք ու չվերապատրաստենք, ապա առանց կասկածանքի պետք է ասել, վոր ապարարտի գտման աշխատանքը վոչ մի հետևանք չի տա, և մենք մեր

հիմնական նպատակին չենք հասնի: Ահա այս հանգամանքները և մեր վերև հիշած սխալներն ասում են, վոր պրոֆմիությունները մարտական կարգով պետք է իրենց աշխատանքները վերակառուցեն ու առաջընթաց աշխատանքների մեթոդը փոխեն:

Բանվորների առաջընթաց հետ գուզընթաց մոռացության չպետք է տալ ծառայողներից ու հիմնարկային աշխատողներից հմուտ, փորձառու, անձնվեր և աշխատանքի ընթացքում ընդունակություն ցուցաբերածներից ելառաջ քաշել, և դրա համար ել ծառայողական միությունները քիչ պակաս աշխատանք չունեն կանոնադրելու այս ասպարիզում, իսկ մյուս կողմից պետք է նշել այն պաշտոնները (բրոնյա), վորոնց համար բանվորներ են առաջ քաշվելու:

Կուսկոմիների, բջիջների ղեկավարությունը այստեղ դառնում է ամենից վճռականը ուստի ունի մարտական բնույթ: Բջիջները պետք է ստեղծեն բոլոր միջոցները, վոր քաղաքում ու գյուղում բանվորական և գյուղացիական լայն մասսաները տեղյակ լինեն մեր ապարարտի գտման ամբողջ աշխատանքին և քաղված լինեն անմիջականորեն գտման աշխատանքներին, վոր ապահովված լինի իսկապես խորհրդային ապարարտի աշխատանքի ստեղծումը: Գյուղի ապարարտի ստեղծման ու գտման աշխատանքներում կուսընթացները և բջիջները պետք է կազմակերպեն այն մեծ ակտիվը բատրակային չբավորական մասսաներից, վորոնք պետք է այս աշխատանքի ծանրությունը կրեն իրենց ուսերի վրա: Պետք է այնպես անել, վոր շրջագործկով կամ հողբաժնի աշխատանքների գնահատականը վոչ միայն տա այդ ապարարտի աշխատողը, այլ և այն

գյուղացիին, վորն անմիջապէս իր առերջա ապրուստով ու խնդիրներով կապված է այդ ապարաւորհետ:

Կուս. բջիջները հատուկ ուշադրութեամբ պետք է պատրաստեն նաեւ անկուսակցական նվիրված ակտիւ բանվոր-ծառայողներին, կանանց ու յերիտասարդութեանը: Պետք է աշխատանքի, վոր նա ագիտացիա տանի մասսաների ինիցիատիւան բարձրացնելու և շարժելու, վոր նա տեղ-տեղ նկատվող սառն ու անտարբեր վերաբերմունք ցուց տվողներին քաշի այս աշխատանքին: Տրամադրութուններ կան, վոր «վոչ կհայտնեմ քո մասին վատը, վոչ դու իմ մասին հայտնես» կամ թե չե՝ «Բնչ իմ գործն է մատերիալ տալ, թող իրենք պարզեն» և այլն. ահա նման տրամադրութիւններ ղեմ պետք է մենք հակադրենք կազմակերպված ինիցիատիւա ու բանվորների ու ծառայողների լայն ինքնաքննադատութիւն:

ՉՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մենք համառոտակի կանգ առանք այն խնդրի վրա, թե ում ենք գտելու. ԲԳԾ-ի հրամանում, վորը հաւանութիւն է գտել ԺԿՍ-ի կողմից, ասված է, վոր պետք է գտենք «խորհրդային ապարաւոր խեղաթիւրողներին, կուլակի ու նեպմանի հետ միացողին, քաշքըշուկներին դեմ տարվող կռիւլ բանգործներին ու ծածկողներին, դեպի աշխատավորների առերջա պահանջները մեծամտութեամբ չինքնազիջական, բյուրոկրատիկ վերաբերմունք ցույց տվող անձանց, կաշառակերներին, սարտաւաճիկներին, քնադարձներին».

այստեղ անշուշտ ամբողջ ցուցակը չի սահմանափակվում. այս կամ այն անձնավորութեան պետք է մո-

տենալ չենելով նրա անցյալից, ինկատի առնելով նրա սոցիալական ծագումը (հակահեղափոխականներ, նախկին ժանդարմներ, պամեշչիկներ և այլն): Ինչ խոսք վոր չի կարելի ամբողջ ծառայողներին մեղադրել ու դեպի բոլոր աշխատողներն անվստահութեան տրամադրութիւններ ստեղծել և վոչ ել գտել բոլոր նրանց, վորոնք սոցիալական ծագումով այնքան ել հարազատ չեն. այս խնդրում պետք է ամենազգուշ վերաբերմունք ունենալ և բոլորին միատեսակ գնահատական չտալ, այլ մոտենալ այս կամ այն աշխատողին, թե ինչպէս է աշխատում և այսօր քննել նրա աշխատանքի վորակը, տարած դասակարգային դիւծը, ինչպէս է կիրառում բանվ.-գյուղացիական իշխանութեան հրահանգները, գեղեցիկները և այլն:

Չի կարելի մեկին գտել միմիայն նրա համար, վոր նա քահանայի աղջիկ է յեղել. պիտի պարզել՝ այսօր այդ աղջիկը հոր հետ կապ ունի՞ թե վոչ: Նույն ուրիշակը կարելի չի բերել նախկին սպայի նկատմամբ. դարձյալ պիտի աշխատել խուսափել շարուն ձեւերից, շարուն մոտեցումից և այլն, իսկ զրանց կողքին, չեթե մեկը ունի պրոլետարական ծագում, բայց վերջնականապէս կազմալուծված ու բյուրոկրատացած անձնավորութիւն է, պետք է անշուշտ գտնել և պաշտպանութիւն չի գտնի իր ծագման պատճառով. այդպիսի դեպքում ել պիտի լինել զգուշ: Պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, վոր յերևա, վոր խորհրդային իշխանութիւնը հարգում ու գնահատում է այն բոլոր անկեղծ աշխատողներին, վորոնք միանգամայն նվիրված և ոգտակար աշխատանք են կատարում մեր ապարաւորում:

Այժմ լերկու խոսք, թե ինչ կազմակերպչական ձև ե ունենալու մեր այս աշխատանքը:

Նախ և առաջ ԲԳՏ-ին կից կազմվում են գավառային (ամբողջ գավառի համար) և հանրապետական հանձնաժողով, վորը գտելու չե հանրապետական հիմնարկները, նայելու չե այն վորոշումները և բողոքները, վորոնք վերաբերում են գավառային և հիմնարկային հանձնաժողովների աշխատանքներին: Հանձնաժողովների մեջ անպայման տեղ ե տրվելու պրոֆմիուսթյունների ու բանվորների ներկայացուցիչներին: Մեզ մոտ 1929 թվի ընթացքում, ըստ նախնական տվյալների, գտվելու չեն հետևյալ հիմնարկներն ու ապապարտները՝ ֆինոդկոմատ և գավֆինբաժիններ, Պետբանկ ու Պետապ, Աշխոդկոմատ, աշխբորսա, գործադուրկներ, սոցապգանձարկղներ, միլիցիա, գավգործկոմ (Յերեվանի) և Հող֪ոդկոմատն իր գավառային որգաններով ու շրջանների ապապարտները, բացի կոոպերացիան և գյուղխորհուրդները: Բայց դա դեռ չի նշանակում, թե մյուս որգաններում գտում չենք կատարելու. դա ծրագրի ու հերթականություն հարց ե, և թող մյուս հիմնարկներն ու միությունները հանգիստ չնստեն, ինչպես հիմա այդ նկատվում ե, այլ ոգտագործեն ժամանակը և տանեն մի շարք նախապարտապատկան աշխատանքներ, վորովհետե 1930 թիվը շատ հեռու չե. այժմյանից նրանք իրենց աշխատակիցներին աշխատանքային ցուցակները պիտի պատրաստեն, դնահատականները պիտի կազմեն, առաջըաշման տեղեր պետք ե պատրաստեն, ղեղերվի մասին պիտի մտածեն, հաշվետվություններ պիտի պատրաստեն և այլն: Զտման աշխատանքի առավելությունը կապ-

նում ե նրանում, վոր այդ աշխատանքը կատարվելու չե բաց ու աշխարա, և դա գրավական կլինի հաջող կերպով աշխատանքն ավարտելու:

Զտման հանձնաժողովները պետք ե խուսափեն ընդհանուր ձևակերպումից (գտվողների վերաբերյալ), որինակ՝ «կազմալուծված ե», «խորթ ելեմենտ», «ազնւրվական» և այլն, այլ շատ վորոշակի ու պարզ կերպով պիտի նշված լինեն այն բոլոր հիմնական պատճառները, վորոնք հանդիսանում են զտման պատճառը:

Զտման ժամանակ չպետք ե տարվել քանակով, այլ ուշադրություն պիտի դարձնել նրա վորակին: Բոլորովին կարիք չկա կանխորոշել զտման $\frac{0}{100}$ —դա նույնիսկ անթույլատրելի ու բյուրոկրատիկ տեսակետ ե, — կամ թե չե նպատակ դնենք շատերին ըջելու. ամեն դեպքում մենք պետք ե անշեղ տանենք մեր դասակարգային գիծն առանց վորեւ գիջումի: Այդ աշխատանքներով պետք ե տանենք և գաստիարակչական աշխատանք. այս գտումը մեզ թելադրում ե իսկական կազմալուծվածներին, վնասարարներին և չարամիտ անձնավորություններին հեռացնել, իսկ փոքր և մանր սխալներ կատարողներին շտկել, ուղղել: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, վոր զտվողների ցուցակն ընդհանուր ժողովում ընթերցվելու չե: Զտվողները բաժանվում են լերեք կարգի. առաջինը նրանք են, վորոնք զրկվում են խորհրդային ապապարտում ծառայելու իրավունքից, վորոնց ծառայական ցուցակում այդ հանգամանքը պիտի նշվի ու թերթերում հայտարարվի. լերկբորղը նրանք են, վորոնց այդ հիմնարկում չի կարելի պահել, բայց կարելի չե ուրիշ հիմնարկում ոգ-

տագործել. Ի վերջո՝ յերրորդը՝ նրանք են, վորոնց աննպատակահարմար ե թողնել պատասխանատու աշխատանքում, բայց կարելի չե ոգտագործել վորպես տեխնիկական աշխատավոր:

Վերջին յերկու կարգի հեռացվողները պիտի մընան արհմիության շարքերում, իսկ առաջինը դուրս ե արվում միությունից առանց ալլեայության: Այս բոլորի հետ դուզընթաց պետք ե ուշադրություն դարձընենք կեղծ մասնագետներին և այն անձնավորություններին, վորոնք մասնագիտական կրթություն են ըստացել (ազդոնում, բժիշկ և ալլն), բայց չեն ցանկանում այդ բնագավառում աշխատել և տեխնիկական ու կիսատեխնիկական գործ են կատարում, միայն թե քաղաքում մնան:

Չտման ժամանակ շատ մեծ զգուշություն ե հարկավոր դեպի մասնագետներն ու պահեստի հրամկազմը. պահեստի հրամկազմին զտելիս ժամանակին պետք ե համաձայնեցնել ռազմական կոմիսսարիատի հետ:

Իվերջո անհրաժեշտ ե զտել նաև բորսայի գործազուրկներին (առաջին հերթին), վորտեղից մենք ուժեք ենք տալու զտվողների տեղ: Այստեղ անհրաժեշտ ե լրացուցիչ հրահանգ Աշխօղկոմատի կողմից, թե ինչպիսի գործազուրկների պետք ե զտել: Բոլոր զըտվողներն իրավունք ունեն բողոքարկելու հետևյալ կարգով. 2-րդ և 3-րդ կարգով զտվողները կարող են հիմնարկային հանձնաժողովի վորոշման դեմ բողոքել ԲԳՏ-ի հանձնաժողովին, վորը վերջնական ե. իսկ 1-ին չկատեգորիայի բողոքները համապատասխան բարձրաուշն հանձնաժողովին. բողոքները քննության չենթակա չեն վոչ ԳԿ Հանձնաժողովում, վոչ ել դատա-

րաններում. բողոքները պետք ե տրվեն գտվողին հայտնման որից վոչ ուշ, քան 3 շաբաթ ու քննության առևվին 1 ամսվա ընթացքում:

Մասնագետների բողոքը կարող ե տրվել Անդըրկովկասյան հանձնաժողովին: Այն անձինք, վորոնք բողոքարկման հետևանքով վերականգնվում են իրենց նախկին պաշտոնում, ամբողջ ժամանակաշրջանի համար բավարարվում են աշխատավարձով, իսկ նրանք, վորոնց իրավունքը լրիվ չի վերականգնվում, ստանում են մեկ ամսվա աշխատավարձ:

Բոլոր այս դեպքերում պրոֆմիությունները դիտողի դերում չպետք ե մնան, չեթե անհիմն մեղադրանքներ են չարտվում այս կամ այն աշխատակցի հասցեյին. պրոֆմիությունը չպետք ե մոռանա, վոր նա մասսաների ղեկավարն ե ու շատ մանրամասն կերպով քննության պետք ե առնի, անհրաժեշտ դեպքերում պետք ե ցույց տա լայն աջակցություն ու ճանապարհ, վոր նա կարողանա արդարանալ կամ բողոքել:

Չտման աշխատանքից հետո անհրաժեշտ ե, վոր ընդունման ու հեռացման ժամանակ մեր հիմնարկների պետերը պրոֆմիութենական որդանների հետ միասին խիստ հսկողություն սահմանեն, վոր մեկին ընդունելիս մանրամասնորեն՝ իմանան, պարզեն ու պահանջեն ծառայական ցուցակը, թե աշխատանք փնտոողը ինչ պատճառով ե հեռացված, և հետո նոր ընդունեն:

Մասսայական ու մարտական կարգով, հանուն եր ապարատի թարմացման ու ճկունացման, հանուն իսկական խորհրդային ապարատ ստեղծելու, մորիլիզացիայի չենթարկելով ու հենվելով բանվ.-զյուղ. ուժերի վրա՝ կատարենք մեր ապարատի դտումը:



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОСЛОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

«Ազգային գրադարան»



NL0220873

39.222

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКИХ
НАУК
Академии Наук
СССР

281
807 0

807

4
C21400

ԳԻՆՆ Ե

3

ԿՈՊԵԿ